



Լեւոն Գ. Հայոց թագաւորը իւր ընտանիքով. Léon III, roi d'Arménie, avec sa famille.



Վասակ իսխան, արհայեղայր.

Le prince Vassaque, frère du roi.



Մարիան Հայոց րազուհիք.

La reine d'Arménie Marioun. Լեւոն Գ. Հայոց րազուարք. Léon III, roi d'Arménie.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

ԼԵՒՈՆ Գ. ԹԱԳԱՆՈՐԻ, ԿԵՌԱՆ ԵՒ ՄԱՐԻՈՒՆ ԹԱԿՈՒՀԻՆԵ-
ՐԻ ԵՒ ԼԱՄԲԻՐՈՆԵԱՆ ՎԱՍԱԿ ԻՇԽԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԸ:

Մեսոպ եպիսկ. Տէր Մովսիսեանի

1907 թուի Յունիսի 8-ից մինչև 1908 փետրուար ամիսը ձեռնարկեցի մի երկար ճանապարհորդութեան ուսումնասիրելու և ցուցակագրելու հայերէն ձեռագրեր: Այդ երկարատև ճանապարհորդութիւնը, որի ժամանակ ևս հնարաւորութիւն ունեցայ մշտնել նաև Կ. Պօլիս, ապա Երուսաղէմ, այն էլ Արզիւլ Համիդի բրնակալութեան օրերում, երբ հայերի մուտքը Տաճկաստանում արգելուած էր. Տաճկաստանից Եգիպտոսի վրայով անցայ Հոովմ, Փարիզ, Լոնդոն, Օքսֆորտ, իսկ վերադարձին երկու ամբողջ ամիս մնացի Վենետիկում: Բոլոր տեղերում ըստ հնարաւորութեան և յարմարութեան կամ անձամբ ցուցակագրեցի, կամ պատրաստի կազմած ցուցակներից, օրինակ Պօլսի Ազգային Մատենադարանի, Արամշի և Վենետիկի ձեռագրերի մասին տեղեկութիւններ ժողովեցի աւելի քան 6000 օրինակ գրչագիրներից: Շնորհակալութեամբ մեծ պարտք եմ զգում յիշելու այն սիրայօժար հիւրասիրութիւնը, որ ինձ ցոյց տուին Պօլսում, Երուսաղէմի, Վենետիկի Հայոց վանքերում, որով ինձ մեծապէս դիւրութիւն տրուեց կատարելու իմ ձրագիրը, թէև ոչ իմ նախամտածած և անհրաժեշտ չափով, ժամանակի և նիւթականի սղութեան պատճառներով: Բացի այդ որոշ ազդեցութիւն ունեցաւ այն հանգամանքը, որ զանազան տեղերում աշխատելու պայմանները չափազանց տարբեր էին. Պօլիս անվերջ շտապում էի, շարունակ երկիւղով սպասելով որ ամեն բողբոսում կարող են ինձ առաջարկել թողնել և հեռանալ քաղաքից, որովհետև յատուկ կարգուած լրտեսը քայլ առ քայլ հետևելով ինձ, սարսափ էր գցում այն մարդկանց վրայ, որոնց ես դիմում էի ձեռագրերի համար: Երուսաղէմում թէև սկզբից յայտնի դարձաւ նոր լրտեսի կարգումը, բայց քանի որ վանքի պարսպից

դուրս անելիք չունէի, նրա դոյութիւնը մնաց աննկատելի: Այդ տեղ կատարեցի ես իմ աշխատութեան լաւագոյն մասը. այդտեղ ես հաւաքեցի բոլորովին նոր և կարևոր նիւթեր, պատրաստեցի բաւական թւով լուսանկարներ, աչքի անցրի հարուստ մատենադարանի (2700՝) օրինակ ձեռագրերը, որ մինչև այդ ժամանակ իւր ամբողջութեամբ ոչ ոք չէր ուսումնասիրել և որոնցից միայն 1772 օրինակն էին մինչև այդ օրը ցուցակագրուած և համարագրուած: Միշտ առանձին հաճոյքով եմ մտաբերում այն ամեն դիւրութիւնները, որ արժանացայ իմ եօթ շարաթ տևող աշխատանքի ամբողջ ընթացքում: Վանքի բոլոր միաբանութիւնը յատկապէս մատենադարանապետ Մեսրոպ վարդապետ Նիշանեանի և իմ հիւրամիտար աւագ լուսարարապետ Դաւիթ վարդապետի կողմից:

Վենետիկում ինձ տուին օգտուելու և արտագրելու միայն Հ. Աւգրեանի հնուց կազմած մատենադարանի ցուցակը, Հ. Ալիշանի «Հայկարան» կոչուած երկհատոր յիշատակարանների ժողովածուն և մի քանի ձեռագրեր. նոքա հրատարուեցին թոյլ տալու բոլոր ձեռագրերը աչքի անցնելու: Միաբաններից շատ շատերը դէմ էին այդ հնադարեան սահմանափակումներին, բայց անգոր գտնուեցան իրենց կարծիքն անցկացնելու: Այդ պայմաններում օգտուեցի այնքան, որքան թոյլ էր տրուած:

Սւրբապահան գրատունների համար շատ ասելիք չկայ, այնտեղ պարապելու համար պահանջուում է միայն, որ դուք ձեր դեպքանութեան միջոցով յայտնի կացնէք ձեր անձնաւորութիւնը.—Անգղիայում բաւական է, որ քաղաքում ապրող մի տնատէր ձեր մասին վկայութիւն տայ, ինձնից այդ էլ չպահանջուեց,—այնուհետև ամեն յարմարութիւն տրուած է պարապողին, Անգղիայում տալիս են մինչև անգամ թուղթ, թանաք և գրիչ:

Ձեռագրական ուսումնասիրութեան ծանօթ իւրաքանչիւր ոք կհասկանայ, որ մի քանի ամիսների ընթացքում 6000 ձեռագրի մասին լրիւ տեղեկութիւններ հաւաքելը ուղղակի անհնար էր, ուստի հարկ եմ համարում ասելու, որ Հոռով մի ժողովածուն մասամբ տպագրութեամբ յայտնի է, Պարիզինը և Լոնարայինը ես պատրաստած ունէի դեռ ևս 1892 թուին, և հարկաւոր էր մի քանի լրացումներ և վերստուգութիւններ, Պօլսի Ազգային Գրատան ցուցակը կազմել էր Բարզէն վարդապետ Կիւլիսեանինը, Արմաշի վանքինը Պ. Յ. Թօփճեանը, իսկ Վենետիկի հարուստ գրադարանի համառօտ ցուցակի միջից անուններից դուրս շատ քիչ բան կար քաղելու: Այս գրադարանում նորութիւններ գտնել ես ամենևին

չէի սպասում, Վենետիկի հայերի քաջածանօթ աշխատասիրութիւնը հազիւ թէ անյայտութեան մէջ թողնէր կարևոր և հազուագիւտ նիւթեր^{*}), սպասելիքը նրուսաղէմիցն էր, քանի որ արտաքին աշխարհի համար այդ հարուստ ժողովածուն համարեա թէ անյայտ էր:

Սակայն մի հանգամանք ինձ, և անկասկած շատերի համար անբացատրելի էր, թէ քանի որ նրուսաղէմի ձեռագրատունը համարեա թէ անմերձենալի է պահուած, ապա Վենետիկի միաբանները այդ ժողովածուի դանազան օրինակների մասին տեղեկութիւններ թրտեղից էին քաղում: Մերոպ վարդապետ նիշանեանը ինձ բացատրեց այդ գաղտնիքը՝ յայտնելով, որ Տիգրան Սաւալանեանը, Սոսյի պատրիարքի քարտուղարը, նրուսաղէմից յանձնարարուած յատուկ վարձատրութեամբ կազմել է բաւական ընդարձակ ցուցակ, որի մի օրինակը, գաղտնի պահելու պայմանով, վաճառել է Վենետիկցիներին: Եւ այդ ցուցակիցն են շարունակ օգտուում առանց հեղինակի անունը յայտնելու: Տիգրան Սաւալանեանը այժմ վախճանուել է, նրա ցուցակը կազմուած է, պարունակելով 1742 օրինակ, բաւական հմտութեամբ և ունի զբաղան մի քանի խնդիրների ճիշդ բացատրութիւն: Մեր համոզմամբ Վենետիկցիք արդար վարուած կ'լինեն, որ այսուհետև այլևս գաղտնիք պահելու հարկի մէջ չլինելով, հարկաւոր դէպքում յիշատակեն Սաւալանեանի անունը և նրանը յայտարարեն, ինչ որ նրանն է: Տիգրան Սաւալանեանի ցուցակից օգտուել եմ և ես:

Այն մեծ ակնկալութիւնը, որ ես ունէի նրուսաղէմի գրատան նկատմամբ, դժբախտաբար լիովին չարդարացաւ, կորած պատմագիրներ, անյայտ հեղինակներ, 7-րդ դարու գրչագիր անտարան, կամ ընտրութեամբ կարևոր օրինակներ ես այնտեղ չըգտայ, սակայն 2700 օրինակ խոշոր ժողովածուն դարձեալ այնպիսի նիւթեր է պարունակում իւր մէջ, որ հայ ձեռագիր ժողովածուների կարգում էջմիածնից յետոյ թէ թուով և թէ իւր կարևորութեամբ պէտք է երկրորդ տեղը զբաւէ, շատ կողմերով գերազանց Վենետիկից և համարժէք էջմիածնին: Վենետիկում ձեռագիր ժողովողները, ըստ մեծի մասին յայտնի պատրաստութեամբ անձինք, աշխատել և ժողովել են որոշ սիւստեմով. նրուսաղէմում առերևոյթ այդ ուղղութեամբ ոչ ոք չի մտածել, բայց վանքի մերձաւորութիւնը Կիլիկիային՝ միջին դարու հայկական մտաւորական շարժման ամենամեծ միջավայրին, հայ ժողովրդի բարեպաշ-

^{*} Վենետիկցիք իրենց գրատան մէջ ունէին մեծ Սուկրատի մի օրինակը և այդ միայն 3 տարի առաջ է յայտ տնց երկտասարդ Հ. Կարապետ Սահականը: Գէտք է կարծել որ բացառիկ երևոյթ է:

տական զգացմունքը, վանքի հնութիւնը, նուիրակների առաքումը Հայաստանի այլ և այլ կողմերը, բաւական նպաստաւոր համաձայնեցներ են եղել ժողովածուն հարստացնելու համար:

Այդ ճանապարհորդութեամբ և տարիներից ի վեր մեր կատարած աշխատանքների շնորհիւ մեզ յաջողուել է ցուցակագրել և ի մի ժողովել ընդարձակ տեղեկութիւններ 20,000 աւելի հայերէն գրչագիրների մասին: Յուցակագրութեան մէջ մտնում են Հայաստանի և նրանից դուրս համարեա թէ բոլոր փոքր ի շատէլ յայտնի ժողովածուները: Որքան էլ առերեսոյթ մեծ է այդ թիւը, բայց նա աւելի է ապացուցանում, թէ որքան մեծ է եղել Հայաստանի մտաւորական շարժման իրական վիճակների և վաւերագրերի անդաւնալի կորուստը: Եթէ Հայաստանի բազմաթիւ աւերակ վանքեր, եկեղեցիներ, դղեակներ և քաղաքներ երկրի անցեալ քաղաքակրթութեան յուշարարներն են, եթէ յայտնի պատմագիրներ կամ ժամանակագիրներ մեզ հաղորդում են հին դարերի անցքերի յաջորդականութիւնը, ձեռագրերը, անկախ իրենց ներքին բովանդակութիւնից, ի մի հաւաքուելով, դալիս են համարեա թէ լրիւ պատկերացնելու հայկական ներքին կեանքին շատ և շատ կողմերը, որի մասին այնքան քիչ են խօսում մեր պատմութեան հեղինակները:

Բաւական հետաքրքրական է ճշտել, թէ անողոք ժամանակի և անվերջ միմեանց յաջորդող թշնամիների և աւերիչների հարուածներից ձեռագրերն են աւելի տուժել, թէ հոյակապ և հաստատուն շինութիւնները: Եթէ առաջիկները, իբրև աւելի դիւրատար և թանգարժէք, ծածկելը և տեղից տեղ տեղափոխելը դիւրին էր, միւս կողմից հոյակապ շէնքերը հիմնովին կործանել և անհետ կացնելն էլ այնքան թեթև աշխատանք չէր յափշտակիչ թշնամու համար: Եւ երբ համեմատութեան ենք դնում մտաւորական և քաղաքակրթական այդ կրկին յուշարձանները, սկսած հինգերորդ դարուց հայերէն գրերի գտնելուց ի վեր, գտնում ենք շինութիւններ ապահովապէս հինգերորդ դարուց ի վեր, — էջմիածնի տաճարը, Տիկորի եկեղեցին, սոցա վրայ հայերէն արձանագրութիւններ, (եթէ կասկածելի չհամարէի Տիկորի հինգերորդ դարու արձանագրութիւնը) — մանաւանդ եօթերորդ դարու առաջին կիսից — օրհնութիւնների, Զուարթնոցի, Մրէնի, Թալինի, Թալիշ կամ Արուճի և այլ եկեղեցիների արձանագրութիւնները: Մինչդեռ հաստատութեանով յայտնի միայն մի օրինակ ձեռագիր. ունենք իններորդ դարուց, Լազարեան ճեմարանի 887 թուին գրուած աւետարանը, իսկ տասներորդ դարու թուականով յայտնի են միայն ինն օրինակ աւետարան և մի քանի օրինակ ուրիշ ձեռագիրներ: Բազ-

բատունեաց՝ և յարակից փոքր թագաւորութիւնների դարեշրջանն էր այդ, երբ Հայաստանի շատ անկիւններում շինարարական եռանդուն գործունէութիւն կար, որի մնացորդ աւերակների թիւը շատ աւելի մեծ է, քան անկորուստ մնացած ձեռագրերը: Սակայն յառաջ տանելով համեմատութիւնը, փոխուած է յարաբերութիւնը, որովհետև սկսած Կիլիկիան շրջանից բարեբախտաբար ձեռագրերից ևս շատ բան է պահուած:

Հնագոյն շրջանի ձեռագրերի այդքան մեծ բացը չափազանց զգալի է ոչ այնքան զրականութեան նիւթի կողմից—օրինակ թէև չունենք ոչ մի օրինակ երկաթագիր Աստուածաշունչ, բայց նոցա փոխարինում են 12-րդ և հետեւեալ դարերի բոլորագիր օրինակները—որքան զրչութեան և մանաւանդ մանրանկարչութեան արուեստի պատմութեան տեսակէտից, Հայերը իրենց նոր կրօնի հետ հարևան ասորիներից և ապա յոյներից փոխ են առել նոցա քրիստոնէական քաղաքակրթութիւնը, սակայն ճարտարապետական, մանրանկարչական, գեղագրական և այլ արուեստների հարուստ յիշատակարանները փայլուն ապացոյց են, որ ընդունակ աշակերտները շատ շուտ աշակերտի դերից վարպետներ և ինքնուրոյն ստեղծագործողներ են դարձել: Պատմագէտի համար թէ գրաւիչ և թէ անհրաժեշտ է քայլ առ քայլ հետախուզելով ի յայտ ածել հայ ժողովրդի ինքնուրոյն ստեղծագործունէութեան աստիճանները: Միայն թէ յիշեալ թերութեան շնորհիւ ամեն քայլափոխում հանդիպում ենք զժուարութիւնների: Երուսաղէմի վանքում գտնուած է Կարսի Աբասի որդի Գազիկ թագաւորի համար գրուած երկաթագիր մագաղաթեայ խոշոր աւետարանը: Մագաղաթը սպիտակ է և փայլուն, զբերը խոշոր են և գեղեցիկ, ամբողջը սկզբից մինչև վերջը զարդարուած խորաններով և կիսախորաններով, մանրանկարներով, լուսանցազարդերով և փառագրերով, թէ լուսանցներում և թէ բնագրի մէջ: Արուեստի կողմից այդ ձեռագիրը զլուխ գործոց է և սակայն նա հազուագիւտ օրինակ է և չունենք ուրիշ այդ ժամանակից կամ դրանից առաջ դրան համարժէք: Կարսի և Անիի Բագրատունի Գազիկները և Վասպուրականի Արծրունի Գազիկը մէկը իւր արձանով, միւսը իւր ձեռագրով և երրորդը Աղթամարի վանքի պատերի վրայ պահուած իւր բարձրաքանդակ կրկնակի արձաններով, երևի հայկական արուեստի պատմութեան մէջ այդպէս առանձնացած պիտի մնան՝ առանց նախորդների: Այդպիսի առանձնացած յուշարձանների, պատմութեան և արուեստի ընթացքը ընդհատող բացեր չափազանց շատ են, միայն թէ օրինակներ կուտակելու կարիք չկայ՝ Հայաստանի չարաբախտ պատմական կեանքը ուրիշ

ինչ ժառանգութիւն պիտի թողնէր: Ուստի յատուկ ուշադրութեամբ պարտաւոր ենք ի մի հաւաքելու զոնէ մնացորդ այդ խղճուկ բեկորները, եթէ կամենում ենք մեր քաղաքակրթական պատմական կեանքը պատկերացնել իւր իսկականի մօտ կերպարանքով:

Այդպիսով ստիպուած ենք հնագոյն շրջանի նկատմամբ ձեռնուսյն լինել, կամ գործ ունենալ միայն բացառիկ օրինակների հետ, դրութիւնը փոխուած է Կիլիկիան շրջանից սկսած, ուր պահուած ձեռագրերի համեմատական բազմութիւնը հնարաւորութիւն են տալիս հարուստ նիւթի հետ գործ ունենալ: Ռուբինեան թագաւորութիւնը ամուսնական կապերով միանալով Լամբրոնեան տան հետ, պատերազմական և քաղաքական գործունէութեամբ ծաղկելով և զօրանալով իրրև աղնուական ձգտումների ներկայացուցիչ՝ զօրեղապէս մշակում է քրիստոնէական բարեպաշտութիւն և պրասիրութիւն: Թագաւորներ և թագուհիք, իշխաններ և մեծամեծներ բարձրաստիճան հոգևորականների հետ մրցում են ձեռագիրներ գրել տալով, կամ իրանք գրելով թէ իրենց գործածութեան համար և թէ անհատների և վանքերի նուէրներ տալու համար: Անուանի են Լևոն երրորդը, սրա որդի Հեթումը, որի գրչագրիցն է առաջին անգամ 1666 թ. Ամստերդամում արտատպուել հայերէն սուրբ գիրքը. Հեթում առաջին եղբայր Գոնեբոյ Յովհաննէս արքեպիսկոպոսը, որի ձեռքով գրած կամ գրել տուած և անկորուստ մեզ պահուած ձեռագրերի թիւը չափազանց շատ է, Կոստանդին կաթողիկոսը, Զապէլ, Կեռան, Մարիուն թագուհիներ, Ալիծ տիկինը կամ Տամ Ալիծը, Վասակ իշխանը և շատ ուրիշները:

Դոքա սովորութիւն ունէին իրենց գրել տուած ձեռագրերը արտանքուստ և ներքուստ արքայազայել ճոխութեամբ զարդարել: Դոքա դերադասում էին ընտրել մագաղաթ թաւշանման նրբութեամբ պատրաստած, հարուստ ոսկով և փայլուն ներկերով զեղանկար մանրանկարչութեամբ զարդարել, կազմը պատուիրել արծաթից կամ ոսկուց, թանգագին բարերով ընդելուզելու: Շատ անգամ բիզանդական արուեստի սերտ հետևողութեամբ, նկարել էին տալիս իրենց պատկերները, պահպանելով ժամանակի արուեստի մէջ գործածական ձևերը:

Այդ ձևով պահպանուած թագաւորների, թագուհիների, իշխանների և բարձրաստիճան հոգևորականների նկարները այնքան են, որ արժէքը բոլորը ի մի հաւաքելով նմանատպութեամբ հրատարակել, թերին լրացնելով դրասների նկարներով: Եթէ նիւթական միջոց զաննք մեր ցուցակը տպագրելու, հնար եղածին չափ մենք նրա մէջ կտանք այդ նկարները, այժմ կանխելով ի

լոյս ենք հանում այն մի քանի օրինակները, որ Երուսաղէմի ձեռագրերից լուսանկարեցինք: Միննոյն ժամանակ խօսելով նկարները պարունակող ձեռագիրների մասին, հիմնուելով գլխաւորապէս նոցա մէջ եղած յիշատակարանների վրայ, ի յայտ կածենք թէ հայերէն գրչութեան և նկարչութեան արուեստի մէջ ինչպիսի կարևոր դեր են կատարել Կոստանդին կաթողիկոսը, Կեան թագուհին և նկարիչ թորոս Ռոսլինը:

Մեր հրատարակելիք նկարներից երեքը ներկայացնում են Լևոն Գ. Ռուբրինեան թագաւորին—Լևոնը մենակ, Լևոնը իւր ամուսին Կեանի հետ, երկու դէպքում նա դեռ ևս զահածառանգ էր և Լևոնը իւր կնոջ և հինգ զաւակների հետ իբրև օծուած թագաւոր: Միւս նկարը Վասակ իշխանինն է իւր երկու որդիների հետ, Լևոն թագաւորի հօրեղբայրը, Լամբրոնի իշխան «Մեծ Պարոն» «Թագաւորահայր» Կոստանդինի որդին: Վերջի նկարը Մարիոն թագուհունն է, Կոստանդին Բ թագաւորի մօր և Պաղգին Մարաշախտի դստեր նկարը: Վերջի չորս նկարը առել ենք Երուսաղէմի ձեռագրերից, իսկ առաջինը Նոր-Նախիջևանի սուրբ Լուսաւորիչ եկեղեցու ժողովածուից է: Առաջին չորսը մի նկարչի գործ են, թորոս Ռոսլինի, որի մասին մինչև օրս նորագոյն ուսումնասիրութեանց մէջ համարեա թէ ոչինչ յայտնի չէ, որը սակայն իւր ժամանակուայ ամենանշանաւոր նկարիչն էր, իսկ Մարիոն թագուհու նկարիչն է նշանաւոր Սարգիս Պիծուկ երէցը, որի գործերը բաւական յայտնի են:

Ա. Լևոն Գ. Ռուբինեան թագաւորի մասին. Նրա համար գրուած մի չափազանց գեղանկար ընտիր օրինակ մագաղաթեայ ճաշոցի մէջ, որ Ս. Էջմիածնի ձեռագրատան ամենաթանգագին օրինակներից մէկն է (№ 892), կայ մի բաւական ընդարձակ յիշատակարան Ռուբինեան տան համառօտ պատմութեամբ: Լևոնի մասին այս է գրուած. «Մնաւ այս արքայ շեթում ի թագուհոյ իւր Զապելէ զԼևոն, որ այժմ է թագաւոր և զեղբայր իւր զթորոս որ խողտողեցաւ ի գաւրացն հազարացոց, և դստերս բազումս: Եւ աստուածահաճոյ կենօք կային ի Գ...: Սակայն այդ խաղաղութիւնը վրդովուում է, երբ շեթումը մինչև թաթարութեան ճանապարհորդելով և մոնղոլների հետ դաշն կապելով մտածում է ապահովել երկիրը, Եդիպտոսի սուլթանի զօրքը յարձակուում է Կիլիկիայի վրայ, յաղթում հայերին, զթորոս զորդին շեթմոյ թագաւորիս և զՄեծն Լևոն, որ այժմ է թագաւոր, յետ բազում քաջութիւնս կատարելոյ նորա ըմբռնեաց (սուլթանը) զնա ի գերութիւնս: Վասն որոյ և յայնմանէ համարձեալ եմուտ յաշխարհս հայոց, և հրկիզութեամբ ապականեաց և զքնակիրչնն ի սուր մա-

շեաց զառ և զաւար առեալ ել ողջամբ և զնաց յաշխարհ իւր: Բայց որդի թագաւորին Լևոն ոչ զանգիտեալ ի ծառայութենէ իմայելացւոցն այլ պինդ հաւատով և արեազոյն սրտիւ կացեալ ի գերութեան, նախ բանիւք քաջալերէր զբնակիչս որ յամրոցս աշխարհիս գայթակղեալք էին պինդ կեալ և ոչ տալ ի ձեռս: Եւ ապա ի յանդիման լինելն սուլթանին զարմացոյց զամենեօրն իմաստուն բանիւքն և ահարկու կայիւքն, պատրաստ գրով ի հարցմունս և ի պատասխանին, այլ և ի ձիրնթացս ասպարիսի ելեալ, ընդ սուլտանին առաւելագոյն գտաւ քան զամենայն զինուորսն ի հրահանգս ձիավարութեան մինչ զի յամենայն գործս և ի բանս նորա հաճեալ և հաւանեալ սուլտանն ազատեաց զնա ի բանտէ և ի կապանաց և պատգամ յղեալ առ թագաւորն Հեթում և սիրով երդամբ մեծագոյն պարգևաւք դարձոյց զՄեծն Լևոն յաշխարհ իւր: Որ և ի տալն վերստին նորոգեցան բնակիչք Կիլիկիա, և ամենայն զարմք քրիստոնէից: Եւ իսկոյն հայր նորա ամենայն աշխարհն եզին զնա աթոռ պարտութեան, քանզի ոչ առ յանձն լինել թագաւոր յաւուրս կենաց հար իւրոյ:

Ետ այսորիկ հիւանդացաւ թագաւորն Հեթում որ և մեռաւ իսկ լեալ կրանաւոր թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարկն: Եւ Սեծն Լևոն սուգ պահեալ զիրիս ամիսս ցաւագին անձամբ, և ապա մեծարեալ ի Ղանէն և յամենայն թագաւորաց մերձակայից և հեռաւորաց միաբանութեամբ ամենայն աշխարհին օժաւ թագաւոր ի վերայ ամենայն հայոց, եթող իսրտէ զյանձանս ամենեցուն որք սղալեալ էին նմա, շնորհեաց սարգևս ամենեցուն:

Է սուրբ արքայս հայոց առատամիտ ողորմած ունկնդիր զզուելոց, ապաւէն վտանգելոց և մաքուր երկայնամիտ և ժուժկալ և յամենայն նեղութիւնս համբերող նման Յովբայ և մեծախորհուրդ իբրև զնա ի փորձութիւն անկեալ նման նմա: Քանզի յիշեալ զնոսա, որ աւուրս Լևոն թագաւորին հմուտ ի իւրեանս, դարձեալ աւուրս Լևոնի եկն զօրօք բազմաւք աշխարհս հայոց, և եկեալ արապ և թուրքման ամբոխիւք որ ընդ նմա միաբանեալ էին և աւրեցին դարձեալ զաշխարհս Կիլիկեայ: Եւ արքայն Լևոն ըստ բնական քաջութեան իւրոյ զամենեսեան յորդորէր մարտնչիլ ընդ հազարացիսն, այլ զաւրքն ոչ առին յանձն զի սակաւք էին: Բայց իբրև թշնամիքն զնացին զամենեսեան քաջալերէր և մխիթարէր և առատապարգևօք յանձանձէր մինչև հայեցեալ Աստուած ի պնդագոյն հաւատն նորա և սէր, դարձոյց զքաղցրութիւն ի վերայ մեր և սկիզբն արար բնակելոցն ի մէջ ցաւոց քանզի ետ մերոյ թագաւորիս յաղթութիւն ընդդէմ թշնամեաց, նախ կտտարեաց և զբազում զօրս սուրդանին մարայ ի հարունին և ապա

դրադուժմս ի թուրք սեռէն և յուրով աւուր շահեցաւ այլ և եզլա շնորհն առաջի գլխաւորի մուղալ զօրուն մինչդի պարգևս և պատիւս յուրով շնորհեաց նմա ամէն:

Լևոնի գերութիւնը և նրա եղբոր Թորոսի սպանումը հայերի և ծերունի թաղաւորի համար ծանր հարուած էր, Վարդան պատմագիրը գրում է. այդ շեղև հուր աղէկէզ լերդաշարչար և սրակտոր աշխարհիս մեր և ազգիս, որ կամ շնչարգել և յիբերմանա: Նկարագրուած է թէ ինչպէս դէպքից անմիջապէս յետոյ, ծննդեան և աստուածայայտնութեան տօնին, երբ ըստ սովորութեան թագաւորի շուրջն են հաւաքուում բոլոր իշխաններն ու պարոնները և թագաւորը յիշելով իւր որդիներին, կսկծալից հարցնում է, միթէ չուրբը ներկայ են և բացակայ ոչ ոք չկայ: Միաձայն պատասխանում են, չ'ըմբռնելով թագաւորի հարցի միտքը՝ որ բոլորը ներկայ են: Եթե թագաւորն զայրագին սրտիւ հայեցեալ յայսկոյս և ապա հրամայեաց կիսաձայն և արտասուալի աչօք, թէ երբ ամենն աստ են, ապա ճւր են Լևոնն և Թորոսն: Յայնժամ սկսան իշխանքն անմխիթար և ծանր սգով հեծել և վայ եղուկ սսել:

Յիշատակարանի հեղինակը բանաստեղծօրէն Լևոնի գերութեան ազատումը վերագրում է միմիայն սրա անձնական յատկութիւններին, մինչդեռ իրապէս ազատումը տեղի է ունեցել գերեզմանի թեմքով:

Նրա թագաւորութիւնը տևել է 18 տարի. 1271 թ. յունուարի 6-ից մինչև 1289 թ. փետրուարը, ժամանակի բերմամբ ենթարկուած հարևանների՝ Իկոնիայի թուրքերի և Եգիպտոսի սուլդանի յարձակումներին, և դժբախտաբար ոչ ազատ նաև ներքին խռովութիւններից: Անկախ այդ ամենից, Լևոնի թագաւորութիւնը պէտք է համարել Կիլիկիայի զօրեղութեան շրջանը:

Բարեպաշտ ծնողների զաւակ, իւր ամենափոքր հասակից ծիրանածին իշխանը վարժ էր թէ գէնքի վարժութեամբ-հրիտասարդութեան հասակում իւր վաղամեռ եղբոր հետ ասպետութեան աստիճան ընդունելով, և թէ սուրբ գրոց ուսման մէջ առոտս Կոստանդին կաթողիկոսի, որը Նոր-Նախջևանի ս. Լուսաւորիչ եկեղեցում անկորուստ պահուած գեղանկար աւետարանը նրան է նուիրում-աշնորհեաց Սանոյն իւր Լևոնի, Հ. Ալիշանը Միսուանում (էջ 388) նմանատպութեամբ տալիս է Լևոնի ստորագրութիւնը ¹⁾ Լեւոն Յազաւոր Հայոց, — որ ցոյց է տալիս թէ նա որքան վարժ, հաստատուն և գեղեցիկ գրիչ ունէր:

Իւր իշխանութեան ընթացքում Լևոնը ամեն կերպ խրախու-

1) Համեմատ. իւր Միսուան էջ 158, 195 և այլն:

սում է գրականութիւնը, հովանաւորում գրադէտներին, պատ-
րաստել տալիս նոր ձեռագիր. հները նորոգում, նոր գրքեր թարգ-
մանել տալիս, ձեռագրեր նուիրում այլ և այլ եկեղեցիների և
անձանց, դպրոցներ բանում, վանքերը շէնացնելուն նպաստում և
այդ բոլորի համար արդարութեամբ ժամանակակից պատմչից «գրա-
սէր» տեսողութիւնով է արժանացել: Նա իւր անհատական կեանքում և
ընտանիքի շրջանում օրինակ էր հանդիսանում քրիստոնէական
առաքինութիւնների, — բազում անգամ անդրանկաւն հանդերձ և
իշխանօքն նստեալ առ ոտս կաթողիկոսին, լսել խրատս և զքա-
ռասնորդան պահել հացիւ և ջրով, և միայն ի տօնի աւետեաց լու-
ծանել ձկամբ և դինեաւ և այն հրամանաւորին կաթողիկոսի:»¹⁾
Լևոնի այս յատկութիւնները գալիս են անհրաժեշտ կերպով
սպացոյցանելու այն ձեռագրերը իրենց յիշատակարաններով, ո-
րոնց մասին այժմ պիտի խօսենք:

Կատարելապէս բացառիկ երևոյթ է և միակ օրինակ, որ
մեր առաջն ունենք հայ թագաւորներից մէկի պատկերը կրօք
տարբեր հասակում և դիրքում:

Առաջին նկարում մեր առաջն է Լևոն իշխանը իւր երիտա-
սարդական հասակում: Նա կանգնած է հանդիպահայեաց, աջ ձեռ-
քով կրծքի վրայ ծալած բռնած ունի գունդը, իսկ ձախով բարձ-
րացնում է երկար վերարկուի փեշը: Այդ վերարկուն ծածկում է
նրա ամբողջ մարմինը. բաց է միայն աջ թևը և սրունքների մա-
սը, վերարկուն կարմրագոյն է, միայն ներքևի եզրքին կարուած
է լայն ժապաւէն. ոսկեայ և գոյնզգոյն թելերից ասեղնագործած
կտորից: Վերարկուի տակ հագած ունի երկար շապիկ, ներքևը
նոյնպիսի ժապաւէնով եզերած. շապիկի վրայ նկարուած են առիւծ-
ներ. վզին փաթթած ունի լայն մարգարտային վզկապ, իսկ
թևերի վրայ ամրացրած են բազպաններ:

Լևոնի դէմքի գծադրութիւնը նուրբ է. երեսը մաքուր: Նա
չունի բեխեր և միրուք, գլխի մազերը թողնուած են բաւական
երկար, որ խոպոպներով իջնում են ներքև, առանց ուսերին հաս-
նելու: Գլուխը բաց է. ոսկեգոյն լուստպասակը շրջափակում է նրա
պատանեկան գլուխը: Նրա գլխի վերևում երկու հրեշտակ ամբողջ
մարմնով՝ աջ ու ձախ սաւառնելով բռնած ունեն քշողներ: Լևոնը
գտնւում է մի սիւնազարդ սրահի մէջ. բարձրադիր զահաւորակի
առաջ: Սիւնազարդն ըստ ամենայնի նման է աւետարանների
սկզբներում շատ սովորական խորանազարդերին, որի կամարի-
զլիսին զինանշանաձև նկարուած են երկու թռչուն, իսկ երրորդ

1) Սիսական. 541.

թռչունը զլիսի վայր թռչում է ներքև: Մեր հրատարակած նկարից ¹, այդ մասերը կտրուած են. բայց կան էջմիածնում գտնուող արտանկարութեան մէջ:

Նկարի աջ ու ձախ բաց ֆնացած տարածութեան վրայ ոսկէ զլիսազիր տառերով գրուած է. «Լևոն Որդի Հնթում թագ», որով բացարձակ յայտնի է դառնում նկարի ով լինելը:

Նոր-Նախիջևանի ձեռագիրը (Սուրբ Լուսաւորչի № 14-է), առաջին անգամ յիշատակում է Ս. արքեպիսկոպոս Ջալալեանը ² առաջ բերելով Կոստանդին կաթողիկոսի, ապա ոմն Ստեփաննոս գրչի Հայոց Ձխդ—(1297) թուի գրած յիշատակարանը, Նա ձեռագրի մէջ տեսել է Լևոնի նկարը, սխալմամբ զգալով կեր Հեթում թագաւորի՝ կոչելով: Անյայտ մի նկարիչ բարակ թղթի վրայ արտանկարել է այդ պատկերն ու յիշատակարանը և նուիրել էջմիածնի թանգարանին: Գ. Վ. Յովսէփեանը 1902 թ. արտանկարել տալով յիշատակարանն ու պատկերը հրատարակել է «Լուսաւորումս ամսաթերթում» ³ թուղթը սխալմամբ մագաղաթեայ թերթերէ կոչելով և կարծելով որ բնագրի թերթերն են պոկուած և Մայր Աթոռ բերուած:

1903 թ. երբ մենք ցուցակագրում էինք Նոր-Նախիջևանի բոլոր եկեղեցիներէ ձեռագրերը՝ մեզ յայտնեցին, որ Լևոն թագաւորի պատկերը քաղաքի անիրաւ քահանաներից մէկը (կարծեմ Տէր Սարգիս) կտրել տարել է իւր տունը և շրջանակի մէջ գրած պահում է: Նկարը բերուեց և նորից միացրուեց աւետարանին: Իսկ անհետ կորած է Կոստանդին կաթողիկոսի յիշատակարանի բնագիրը, որը պահուած է Ջալալեանի գրքում և Գ. Վ. Յ. ի յօդուածում: Առաջինն ունի մի քանի թերթ սխալներ. իսկ վերջինը բաց է թողել ամենաէական տողերից մէկը «շնորհեալ Սանոյն իւր Լևոնի»:

Արծաթի նոր կազմով ձեռ. գրուած է ամենաընտիր նուրբ մագաղաթի վրայ, այժմ 20,5×14 ս. մեծութեամբ—վերստին կազմելիս անզուշուրթեամբ բաւական խորն են կտրել և քնասել լուսանցների զարդերը,—գիրը երկսիւն 17-ական տողերով, բա-

1. Այդ նկարը մեր թնդրանօք 9. Ն. Աճառեանը պատրաստել, մեզ է ուղարկել Նոր-Նախիջևանից:

2. Զանապարհորդութիւն, Եր. 457-460:

3. Արտասպառութիւն էջ 4. 6. 7:

4. Այս աւետարանը յիշատակում են Մ. Վ. Բժշկեան ճանապարհորդութիւն 303, Դ. Վ. Փիլղղալէմեան, յիշատակարանք 2, ՃՄԱ և Եր. Շահ-Ազիզ պատմական պատկերներ էջ 115—118:

ւական գեղեցիկ բուրբազիւր է, գեղեցիկ ծաղկազրբերով, ոսկէնկար խորաններով և զարդերով: Ձեռագրի սկզբնական գլխաւոր յիշատակարանը կորած է, յետոյ այլ և այլ անձանց ձեռք ընկնելով, նորանոր յիշատ. են աւելացրել, 1297, 1338, 1613 և 1682 թուերից: Սոցանից առաջինը պատմական կարևորութիւն ունենալով արտատպուել է մի քանի անգամ և իւր սկզբնաւորութեամբ — «գրեցաւ սուրբ աւ. ձեռամբ Ստեփաննոսի գրչի ի թուին հայոց ՁԽԶ, (1297)», համարեա բուրբին սխալի մէջ է գցել Աւետարանի գրութեան ճիշդ ժամանակի նկատմամբ:

Հնագոյն յիշատակարանը գրուած է Լևոնի պատկերների սկզբին՝ ամբողջ երեսի վրայ խորանազարդ յատուկ շրջանակի մէջ ոսկէ մակերևոյթի վրայ, կապոյտ գրերով և է.

«Տն կոստանդեա Կաթողիկոսի,
Ջաւետարանս այս (ը)ղծալի
Շնորհեալ սանոյն իւր Լեւոնի
Որդոյ Հեթում թագաւորի,
Առ ի նշան արքայութեան ղատել
Ըստ հաւատոյ դաւանութեան
Որ յուղղափառոց եղեալ սահման
Ի յիշատակ իւր յաւիտեան»:

Գրքիս նուիրողն է Կոստանդին Ա. Կաթողիկոս Բարձրբերդացին, որ արտասովոր երկարատեւ—46 տարի—կաթողիկոսութեան ընթացքում գրել է տուել շատ գրքեր, և նուիրել է վանքերի և դանազան անձանց *)։ «Գրասէր եղեալ ես գրել յոլով Աւետարանս և գրեանս»։ Նա վախճտնուել է խոր ծերութեան մէջ 1267 թ. Ապրիլի 9-ին և թաղուել Դրազարկու հռչակաւոր վանքի մէջ: Վարդան պատմագրի վկայութեամբ սա Հեթումի որդիների, Լևոնի և Թորոսի, դաստիարակն էր, և այն լիովին հաստատուում է Աւետարանիս ընծայական յիշատակարանով:

Քանի որ գրչութեան գլխաւոր յիշատակարանի թուականը կորած է, ժամանակը մօտաւորապէս որոշելու համար մեր ձեռքն ունենք ապահով փաստեր: Երուսաղէմի Աւետարանը, Լևոնի և նրա կնոջ Կեռանի պատկերով գրուած է 1267 թուին, ընդունելով որ Կոստանդին կաթողիկոսը իւր սանին Նոր Նախջնանի Աւետարանը նուէր է տուել սրա պատանեկան հասակում, աւետարանի գրու-

*) Սրա ինքնաձեռագիրը տես Միսուան էջ 150.

թեան թիւը կարող ենք առաջ տանելով հասցնել մինչև 1250 թուականը: Թէպէտե՛ս են նաև նկարչի և գրչի անունները, սակայն այս դէպքում ևս հարցը որոշելուն նպաստում են միւս ձեռագրերը, որոնց նկարագրութիւնից յետոյ, համեմատութեամբ կգտնենք նախնականի ձեռագրի գրչին և նկարչին:

Բ. Լեոնը իր ամուսին Կնոանի հետ նկարուած է Երուսաղէմի 4. 2660 ձեռ. (Այս Աւետարանը պահուում է սուրբ Յակոբայ վանքի ներքին աւանդատանը, աւագ Լուսարարպետի ձեռաց տակ,) որ բարեբախտաբար իւր բոլոր մասերով անթերի է պահուած: Նկարը գտնուում է Աւետարանի վերջում, գլխաւոր յիշատակարանի առաջին թերթի մի ամբողջ երեսի վրայ: Նկարը սովորական խորանազարդ է, հմուտ և կարող արուեստաւորի գործ: Կորնթական ձևի երկու սեան վրայ հաստատուած զարդարուն կամարի կենտրոնում նկարուած է «Յ» «Ք»-ը, ձեռները օրհնութեամբ տարածած դէպի ներքևում կանգնած Լեոնն ու Կնոանը: Յիսուս նրկարուած է միայն կրծքից բարձր, գլխի ոսկեայ լուսապսակը ունի բիւզանդական լաշ: Կամարի երկու անկիւնների վրայ գտնուում են երկու հրեշտակ զինանշանաձև, նկարուած կիսատ մարմնով: (նկար Բ):

Սիւնազարդի մէջ դէմ յանդիման կանգնած են Լեոնն ու Կնոանը, երեք քառորդ մարմնով դէպի իրար թեքուած: Երկուսն էլ իշխանական շքեղ զգեստաւորութեամբ կան ի պաշտօն Յիսուս Քրիստոսի: Երկուսն էլ գլխներին ունին կիսաթագեր ակներով զարդարած և լուսապսակ: Կնոանի զոռ դիպայի հարուստ վերարկուն, լայն ժապակէնով եզերուած և նրա շերտաւոր զարդերով զեղեցկահիւս շապիկը, որի վրայ թագակիր հրեշտակներ կան, տարբերում են Լեոնի զգեստներից: Սրա վերարկուն է զարդերով հարուստ, յատկապէս թռչնամարմին մարդազուրի էակներով—Շողէառ հրեշտակներ է ծածկուած. իսկ շապիկը միազոյն է: Լեոնը ձախ ձեռով, որ վերարկուի լայն փեշով ծածկուած է, առաջ մեկնելով բարձրացրած ունի ոսկեկալմ աւետարանը դէպի Յիսուս, որից լուսոյ ճառագայթ է ցոլանում դէպի «աւետարան» գիրքը, իսկ այլ ուղղանկիւն ծալուածքով կրծքի վերայ մեկնած է դէպի աւետարանը: Բարձրացրած աւետարանի հանդէպ Կնոանը ձախ ձեռում բռնել է վառուած հաստ մոմը, այլ ձեռին սրել է այն դիրքը, ինչպէս Լեոնը:

Քրիստոսին նուիրուած յիշատակարանն ոտանաւորով, որ գրուած է ոսկեգիր գեղեցիկ երկաթագրով պատկերի հանդիպակաց թղթի մի երեսի վրայ, այս խօսքերն ունի.



1801-54

«Յոյս իմ Քս էնդէյից,
Որ ես իշխան Տը բոլորից,
Դուն զստացող բուն բանից,
Նւ նուիրող քեզ ի քոյից,
ԶԼեւոն ժառանգ թագազարմից,
Զտիկիին Կեռանն իւր զուգակից,
Ըսկայ ի կեանսդ անվսխմանից,
Դարձեալ լինել Քեզ փառակից, Ամեն»:

Լեոնի դէմքը դժբախտաբար մասամբ եղծուած է, սակայն նկարի արտայայտութիւնը անկորուստ է. այստեղ ևս նախընթաց նկարի պէս Լեոնը նկարուած է առանց բեխերի և միբուքի, գլխի մազերն ունեն նոյն խոպոպները: Երկու դէմքերի խոշոր նմանութիւնը բացատրուած է ոչ միայն այն պատճառով, որովհետև նոյն անձնաւորութիւնն է, այլ որովհետև մեր համոզմամբ նոյն նկարչի գործն է: Այդ նկարչի անունը այս ձեռագրի մէջ և ուրիշ շատ յիշատակարաններում պահուած է—գա Քորոս Ռոսլինն է: Կեռանի դէմքը նուրբ է, կանացի արտայայտութեամբ, հարուստ մազերով և մարգարտաշար հիւսուած զարդերով եզերուած է մի տեսակ ձուռձև սև շրջանակի մէջ:

Գ. Քորոս Ռոսլինի երրորդ նկարը ներկայացնում է Լեւոնին, Կեռան Պագուհուն և նոցա հինգ զաւակներին, երեքը տղայ, երկուսն աղջիկ. նկարը գտնուած է Երուսաղէմի № 2563 ձեռագրի վերջում, գլխաւոր յիշատակարանից առաջ: Ձեռագիրը բաւական մեծ է, 32Յ X 23¹/₅ ս., նոյնն է և ամբողջ էջի վրայ նկարուած պատկերը: Նկարը շքեղ զարդարուած շրջանակի մէջ ունի Ձ մաս, իրար հետ սերտ շաղկապուած, վերևի մասում երկինքն է, ուր Քրիստոս բազմել է գահի վերայ, որից ճառագայթներ են սփռուում դէպի տիեզերքը՝ ներկայացրած համակենդրոն աստիճանաբար ընդարձակող շրջաններով: Քրիստոսի գլուխը շրջափակուած է յունական ձևի խաչով և լուսապսակով, դէմքը սև սրածայր միրուքով, փոքր քթով, մինչև ուսերը իջնող երկար մազերով, որ հարազատութեամբ կրկնուած է նաև Վասակ իշխանի Աւետարանի մէջ: Քրիստոսը գահի վերայ բազմած, գլուխը փոքր ինչ թեքել է դէպի աջ, գոգումն ունի ականակուռ կազմով Աւետարան, ձեռները օրհնութեամբ տարածել է ներքևում չոգած թագաւորի և նրա ընտանեաց վրայ: Զիւնափայլ սպիտակութեամբ պատմուճանը ծածկում է Քրիստոսի ամբողջ մարմինը: Նրանից աջ ու ձախ, գլուխ-

ները խոնարհած և աջ ձեռները աղաչական ձևով կարկառած կանգնել են Աստուածամայրն ու Յովհաննէս Մկրտիչը. որ միջնորդում են առ Տէր բարեխօսելով արքայական տան աղօթող անդամների համար:

Քաղաւորի տան անդամները բոլորը չոգած են, զոյգ ձեռները աղերսաբար պարզած և հայեացքները դէպի Քրիստոս դարձած, աղօթում են:

Սոքա չունին քահանայական զգեստաւորութիւն յիշեցնող տարազ, ինչպէս նախընթաց երկու նկարի մէջ, այլ բոլորը հագած ունին առօրեայ զգեստներ. որ խիստ հետաքրքրական է: Քաղաւորը մարգարտայեռ թագ գլխին, արքայական փերանին ուսերին զցած, հագած ունի հարուստ ասեղնադրծած մի շապիկ, որ պարանոցը ամբողջութեամբ բաց է ձգում: Բոլորովին նման է հայնուած նաև թագուհին, միայն նրա գլխի թագը տարբեր է, որից խոպոպների պէս կախուած են մարգարտի շարաններ:

Երեք որդիներն գլխներին ունին արախչիներ, երկար շապիկ հագներին և երկար վերնազգեստ առանց թևերի: Կրտսեբազոյն երկու որդիքը զօտևորուած են: Համեմատաբար հարուստ է մեծ որդու, գահաժառանգ Հեթումի հագուստը: Երկու աղջիկների տարազը նման է տղաներին, սակայն գլխներից կախուած մարդարտեայ երկար շարանները և մինչև ծնկներն իջնող գլխի լաչավը որոշում են սոցա սեռը:

Լևոնը չոգած է աջ կողմից, իւր առաջ գահաժառանգը, ապա միւս որդիները. սա նկարուած է տարբեր երկու նախընթաց նկարներից, առնական կատարեալ հասակում, սև թաւ միւրեքով և խոռուն դէմքով: Զախ կողմից երկու դստրիկների հետ չոգած Կեռան թագուհին ևս պատկերացնում է բազմաթիւ զաւակներով և ընտանեկան երջանկութեան օրհնութիւնը վայելած կատարելահասակ մայր, շատ տարբեր այն քնքոյշ նորահարսից, որ իւր նորափեսի հետ մոմը ձեռին բռնած երկրպագում է Քրիստոսին: Ինչպէս Հոգևոյն Սրբոյ շնորհքը վերնատանը, արքայական տան հաւատարիմ և նրա երջանկութեամբ ուրախացող նկարիչը, ներկայացրել է երկնային շնորհաբաշխութիւնը իւր պաշտած ընտանիքի բոլոր անդամների վերայ, չորսական լուսաւոր զնդակներով: Բոլորի դէմքերն էլ. թէ և ոչ ցանկալի կատարելութեամբ նկարուած, արտայայտիչ են այն աղօթական բոլորի համար, ինչպիսիս ցանկացել է նկարել նկարիչը.

Աւետարանը, որից մենք լուսանկարեցինք այս նկարը՝ Երուսաղէմի (№ 2563) ձեռագիրն է գրուած է ՉԻԱ—1272 թուին: ամենաընտիր մտգադաթի վերայ, 382 թերթ, 32,3×23,5.

կազմը հաստ ձուլածոյ ոսկի է, չորս կտորից, ա և բ կողերը: Ա կողի վերայ խաչելութիւնն է, բ կողի՝ Աստուածածին Յիսուս մանկամբ, շուրջ բոլոր հրեշտակներ, փակիչի վերայ չորս աւետարանիչներ. խաչելութեան և Աստուածածնի շուրջը պսակազարդ շրջանակ է:

Փակիչի յիշատակարանն է՝

Եկազմեցաւ և ոսկիապատ դարդարեցաւ արքայական սուրբ աւետարանս ի յիշատակ Գրիգորի և Յովհաննու և Աբրահամ վարդապետաց և ծնողաց նոցա և միաբանից և ողորմութիւն տուողաց աշխատողաց ի սմա յԵրուսաղէմ ի սուրբն Յակոբ, ի թւին ՌՃՀԶ—(1727) յիշեցէք ի Քրիստոս ամէնս:

Կազմի մեծութիւնն է. կող 35×24, էջինը 35×9,3. բնագիրը գրուած է գեղեցիկ խոշոր բոլորազրով, զարդարուած ծաղկազրբերով, խորաններով և նկարներով, բոլոր գլխազրբերը, եթէ զարդագիր չեն, ոսկեգիր են: Բովանդակութիւնն է.

ա. Թղ. 2 ա. 3 բ. Աւետարանացոյց բեմին ընթեռնոյ, Աստուածայայտութեան, Մենդեան Տուն, Տեառնըդառաջին, Ղազարու, Արմաւենեացն, Մեծի Ե շաբ. Ծրագալուցի դատկին, Զատկին կիրարկէին—նոր կիրարկէին, Համբարձման, Պէնտեկոստէին մինչև տապանակին. Վարդավառին, Շողակաթի, փոխման Աստուածածնի, Վարագայ խաչին, Աստուածածնի ծննդեան, Նաւակատեաց խաչին, Սուրբ խաչին, Գիւտ խաչին:

բ. Թուղթ Եւսերի և կանոնք գեղեցիկ խորանազարդերով:

Միւսերի խոյակներն են զոյգ զոյգ արձիւններ, առլւծներ, զոյգ-զոյգ աղաւնիներ, լուսանցներու՝ կան ծաղկազարդեր:

գ. Թղ. 15 բ. և 16 ա. մի զոյգ խորանի վրայ կապոյտ գլխազրբերով, ոսկեայ հիմքի վրայ, գրուած է այս յիշատակարանը.

«Տը իմ Բս Փրկիչ Սարդկան,
Եւ Թագաւոր միշտ յաւիտեան,
Զարժանացեալսն ի քէն աւժտման,
Ղլեւոն արքայն ի Հայաստան.
Եւ զթաւալունն նորին Կեռան,
Որ եւ ստացաւ ըզքոյս մատեան.
Յորժամ փառօք զաս հայրական
Ընկալ ի դասս աջակողմեանս»:

«Եւ զՀեթում սոցին որդի,
Թագաժառանգ հայոց սեռի,
Պահեա կենսաք յերկարելի
Հանդերձ եղբարքք իւրաք բարի,
Եւ զծնողաց սոցին հոգի,
Իւրեանց նախնաւքն եւ այլ զայմի,
Ընգալ ի լոյս ընդ գերարփի,
Եւ քեզ... փստք յսմենայնիս:

դ. Ունի չորս Աւետարանիչների պատկերները:

և. Ա. քստ Մատթեոսի: Գիրք, որդւոյ Աբրահամու, գեղեցիկ ծաղկագրերով է գրուած ամբողջովին: Հետեեալ նկարներն են այս Ա. մէջ:

1. Թղ. 21 ա. ծնունդ, հրեշտակներ, հովիւք, երեք մողեր, լուսցուցն մանկան:
2. Թղ. 23 բ. Յովհաննէս նկարուած լուսանցի վրայ:
3. Թղ. 25 ա. Մկրտութիւն:
4. Թղ. 38 ա. Յիսուս բժշկում է դիւահար կնոջ:
5. Թղ. 48 ա. Յովհաննէս:
6. Թղ. 55 Եսայի մարգարէ:
7. Թղ. 58 զլուխ արդարոյ օր ծագէ որպէս արեգակն:
8. Թղ. 62 բ. Մովսէս:
9. Թղ. 64 ա. Յիսուս և Քանանացի կին:
10. Թղ. 68 ա. Յիսուս կիսատ նկարուած:
11. Թղ. 69 ա. Այլակերպութիւն, ամբողջ երեսում:
12. Թղ. 74 ա. Մառայ չար:
13. Թղ. 76 ա. մանկունք:
14. Թղ. 75 բ. մշակ:
15. Թղ. 79 բ. Մայր Զերեղեայ:
16. Թղ. 81 ա. Մարգարէ:
17. Թղ. 81 բ. փոռւմ են ոստեր և հանդերձ:
18. Թղ. 94 ա. խոշոր երկթեան խաչ, ամբողջ երկարութեամբ:
19. Թղ. 96 բ. Յիմար և իմաստուն կուսանք:
20. Թղ. 104 ա. Յուդան մատնում է:
21. Թղ. 106 ա. Պետրոսին մատնող աղախինը, կիլիկեան ժամանակակից զգեստով:
22. Թղ. 107 բ. Եղիա մարգարէ:
23. Թղ. 109 հրէան ծաղրում է Յիսուսին:
24. Թղ. 110 ա. Աւագակը խաչի վրայ:
25. Թղ. 113 մի փսէ լի արծաթնեղջիւրով:
26. Թղ. 116 ա. Սկսում է Մարկոս, ա. էջը, ինչպէս և հետեեալ աւետարաններինը գեղեցիկ ծաղկագրերով է, չունին նախագրութիւններ և ցանկեր:
27. Թղ. 128 բ. նկարուած է մի գլուխ, որ հոգմ է փչում:
28. Թղ. 136 ա. Յիսուս մանրում է ձրկները:
29. Թղ. 148 բ. բժշկութիւն դիւահարի:
30. Թղ. 149 բ. Յիսուս և մանուկներ:
31. Թղ. 154 բ. կտորած աթոռ աղանազանների:
32. Թղ. 156 բ. ծեծուած ծառայ:
33. Թղ. 158 բ. մարգարէ:
34. Թղ. 166 ա. վերջին ընթրիք ամբողջ էջ:

- Թղ. 168 ա. Յիսուս աղօթում է: 35 Թղ. 169 ա. Յիսուս կալանաւորուած: 36. Թղ. 169 բ. Յիսուս հետևող: 37 Թղ. 171 ա. Պետրոս առաքեալ: 38. Թղ. 173 ա. Սիմոն Կիւրենացի: 39. Թղ. 176 ա. Հրեշտակը ցոյց է տալիս գերեզմանը՝ «եկայք և տեսէք զղեղին»: Վերջանում է «զի երկնէին»:
- է. Գրեզոր Հղծայակիրը գեղեցիկ նօսք գրով գրում է իւր ձեռքով թէ վերստին կազմել է և ոսկիապատել Աւետ. ինչքում է յիշել իւր արիւնակից Մշոյ ս. Կարապետի առաջնորդ Աբրահամ վարդապետ և արքեպիսկոպոսին, աթոռակալ Երուսաղէմի Յովհաննէս վարդապետին և Թովմաս և Յակոբ վարդապետներին, որ երեքը միասին եպիսկոպոս են ձեռնադրուած: Իսկ կողերի յօրինողները եղել են երկու եղբայր Զուղայեցիք՝ մահդեսի Ստեփան և մահդեսի Գէորգ:
- ը. Թղ. 181 ա. Աւ. ըստ Ղուկայ: 40. Թղ. 182 ա. Չաքարեայ, հրեշտակ, 41 Թղ. 183 ա. Չաքարեան պապանձուած: 42. Թղ. 184 ա. Աւետուհի՝ ամբողջ էջի վրայ: 43. Թղ. 186 բ. Եղիսաբէթի ծնունդը: 44. Թղ. 191 ա. Ընծայուհի ի տաճարն առանձին թերթ: 45. Թղ. 194 բ. Յով. Մկրտիչ: 46. Թղ. 197 ա. Սատանան և Յիսուս: 47. Թղ. 199 ա. դիւահար: 48. Թղ. 201 ա. Յիսուս և Պետրոս: 49. Թղ. 206 ա. Լացող ձեր. 50. Թղ. 211 ա. Մարգարէ: 51. Թղ. 213 ա. սերմնացան: 52. Թղ. 216 ա. Յիսուս և խոզերի երամակը: 53. Թղ. 217 ա. Յայրոս: 54 Թղ. 217 բ. Տեոտես կին և Յիսուս. 55. Թղ. 219 ա. Հերովդէս: 56. Թղ. 222 բ. դիւահար 57. Թղ. 225 բ. Բորազինի տնակներ: 58. Թղ. 227 բ. Սամարացին: 59. Թղ. 229 ա. ձուկ, օձ և կարիճ: 60. Թղ. 230 բ. այս—դև: 61. Թղ. 232 բ. գերեզման: 62. Թղ. 243 ա. կերակրով լի անօթ: 63. Թղ. 246 բ. խոզարած, 64. Թղ. 247 ա. Անառակ որդին և հայրը. 65. Թղ. 249 ա. արծաթ և ոսկի դրամ, «Աբքայ» «Լեոն» մակադրութիւններով: 66. Թղ. 206 ա. հայր Աբրահամ, մեծատուն, Ղազարոս: 67. Թղ. 252. Բորոտ բժշկուած. 68. Թղ. 255 ա. Աղօթող. 69. Թղ. 258 ա. Թղենու վրայ Չաքէոսի գլուխը: 70. Թղ. 261 ա. սեղան: 71. Թղ. 265 ա. Յարութիւն մեռելոց: 72. Թղ. 266 ա. Լուսայածիգ կինը: 73. Թղ. 270 ա. մի պատանի սափորը ուսին: 74. 272 երկու սուրբ: 75. Թղ. 274 ա. աքաղաղ: 76. Թղ. 276 ա. Յիսուս սպիտակ զգեստի մէջ: 77. Թղ. 277 ա. Պիղատոս: 78. 282 ա. Սեղան: 79. Թղ. 284 բ. Համբարձում ամբողջ էջ:
- թ. 287 ա. Աւ. ըստ Յովհաննու: 80. Թղ. 297 բ. Յիսուս վաստակեալ, կին Սամարացի: 81. Թղ. 299 բ. Սափոր: 82. Թղ.

303 անդամայնութիւն 83. Թղ. 308 բ. ժողովուրդ նաւակի մէջ, 84. Թղ. 323 բ. ի ձնէ կոյրը: 85. Թղ. 325 բանայնայնակեաներ: 86. Թղ. 333 ա. Յարութիւն Ղազարու ամբողջ էջ: 87. Թղ. 349 ա. Հոգեզալուստ, ամբողջ էջ: 88. Թղ. 357 ա. Կայփաս: 89 Թղ. 358 բ. Մասաները նորա կրակի մօտ: 90. Թղ. 358 բ. քաղաղ: 91. Թղ. 360 ա. Յիսուս փշեայ պսակով. 92 Թղ. 361 ա. Պիղատոս: 93. Թղ. 362 բ. Պաշտօնութիւն Յիսուսի, ամբողջ էջ: 94. Թղ. 368 ա. Յիսուս ցուցանէ զկողն թոմայի:

ժ. Յիշատակարան զլիսաւոր. շատ ընդարձակ և կարևոր:

ԵՓառք ամենասուրբ Երբորդութեանն յամենայն արարածոց յերկնաւորաց և յերկրաւորաց լիմանալեաց և ի զգալեաց և յամենայն շնչոց եղականաց ի գոյից և յոչգոյից:

Որ զժանր ՚ի զմթացուցիչ խորհուրդս ի բաց եղեալ, ոչ յայլ ինչ բան յԱստուած և յաստուածայինս խոկալ փութան, բանիւք և արդեամք: Երկրորդ՝ զստորև կացեալս վարկանելով զի պնդելիք են և անկայանք, և վերնոյն՝ և արդարև անապականին բաղձան բարոյ: Ի՛ զլուխ ըստ իմաստնոյն զակն ոգւոյն ունելով յորմէ ամենայն, և որով ամենայն: Ջոր է տեսանել յերանուհիս այս բամբիչ, ի մաքուր աւրիորդ փեսային սուրբ ի Թաղուհին Գեղան, որ զյոլով մասունս առաքինութեան կրելով յինքեան, փութա այս ի վերայ այլոց բարդի, զի համայնիւքն պսակ ըրւարկնեայ յաւրինեալ է ինքեան, և պանկապուտն թագ ի վերայ այսր կայցի, զի ամենագեղ վայելչութեամբ հաճոյացի որդւոյն Աստուծոյ:

Սոյն վասն ողջախոհ մոլութեամբ վարէր և հանապազաւր կանխէր յերկրպագութիւն տեսն ի զիրկս մաւր մեր Սիոնի սրբոյ՝ ունին զնէր գրոց սրբոց, և լուեալ զբանն եթէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոնի, և երեալ ՚ի խնդիր իմոյ նուաստութեանս Աւետիս զրչի յանձնարարեալ ստանալ զճշմարիտ գաւակս զայս, զոր հոգին սուրբ թելադրեալ ի շրթունս երանեալ աւետարանչացն, խաւսել վասն տնաւրչութեան մարդացելոյ բանին, նաև վասն փրկաւէտ վարդապետութեան նորին որդւոյն Աստուծոյ, և նշանանք և արուեստից զոր առ մերս բնութիւն: Եւ վասն իջման հոգւոյն սրբոյ առ ընտրեալ դասս առաքելոցն, և զնոսին առաքեալ, քարոզս և աւետարանիչս տիեզերաց և տալ իշխանութիւն որոց կամիցին:

Եւ իմ յանկ հանեալ զսա, ետ ի ձեռն այլում հմուտ և յարզի յարհեստ գրչութեան զարդարել զսա խորանաւք և ծաղկաւէտ վայելչութեամբ և ոսկիապատ պայծառութեամբ, և ետ ի վանսն որ կոչի Ակննր:

Վասն որոյ աղաչեմ զտեսողդ և զվայելողոսդ սորա յիշել սրախ մտաւք զերիցս երանեալ թագուհին զԿեռանն զարմիւ իւրովք կենդանեալք յաղաւթս ձեր, զի երկար ժամանակաւ ուղղեսցէ զթագուհութիւն իւր: Եւ յետ ելից աստի թագակից և պսակակից լիցի սուրբ թագուհեացն. յիշեալիք և զառ ի Քս հանգուցեալն ըզհայրն իւր զՀեծնում, հանդիստ և ողորմութիւն շնորհելով նմա ի Տեսունէ և ընդ աջեայն իւր դատեսցէ: Եւ կենդանեացն իւր աջովն իւրով պաշտպանեսցէ փրկելով յարժանահաս նեղչաց և վըշտաց, անգորբ ասլով ամպրոպ խոովութեան կուտակեալ ալեացս յորում շրջապատեալ սուզանիմք:

Արդ զրեցաւ սա ի թուականութեանս հայկազնեա տոմարիս 'ի ՁԻԱ. ի թագաւորութեան Հայոց Լեոնի աստուածասիրի, և ի հայրապետութեան Տեսուն Յակովբայ:

Յիշել այժմ աղաչեմ առաջի զենման անարատ Գառինն Քրիստոսի զամենայն բարեձեռութեամբ զարդարեալ զարբայն Հայոց զԼեոն զկենաց կցորդ և զբանից ընկեր՝ նաև թագակից երանուհւոյն Կեռանի երկար ժամանակաւ աշխարհավայել զթագաւորութիւնն իւր արդար իբաւամբք: Եւ յետ աստի ելից ընկալցի զերկնային խորանսն թագաւորել ի նմա ընդ սրբոց թագաւորաց Թէոդոսի և Կոստանդիանոսի նաև զծիրանածին ո զեակն իւրեանց զՀեծնում զի հասցէ ի չափ հասակի կատարման, և աջն Աստուածային ի վերայ նորա եղիցի, ի նստել ի տան, և 'ի զնալ ի ճանապարհի, ի ննջել և ի յառնել: Ժառանգել զթագն հայրենի, և կեցեալ ըստ աւրիանացն Աստուծոյ վարժեալ զրովք Աստուածայնովք և զինուք սպառազինեալք յաղթող լինել իվերայ թշնամեաց խաչին Քրիստոսի:

Ընդ յիշատակելովք, աղաչեմ յիշել առաջի Քրիստոսի Աստուծոյ զանդրանիկ դուստր սոցա Ջարէլ զփոխեալն ի Քրիստոս, զի ընկալցի զսա ի կենդանեացն իւր խորանս, պայծառացեալ լապտեբաւք մուծանել յառազաստն ընդ իմաստուն կուսանան:

Դարձեալ յիշման արժանի առնիցէք և զերկրորդ քոյր սորա զՍիպիլ զննջեցեալն 'ի Քս զի փոխանակ զգալի վայելմանցս ունայնութեան՝ զոր ոչ վայելեաց վասն զի ստնդեա գողով, ընկալցի զանթառամ փառաց պսակն, և զզգեստն անկողողուտ զլոյսն մըշտնջենաւոր:

Խնդրելով և զայս ևս ի Քրիստոսէ յառատածիր պարգևատուէն զի զկենդանի քոր սոցին պահեսցէ անվրգով նաև երկար ժամանակաւք տալ զսա հաւր և մաւրն ընու և փարատել զսուգ տըրտմութեան զոր ի ծննդոց իւրեանց ընկալան:

Վասն որոյ աղաչեմ զդաս սրբազանից զվայելողքդ սրբոյ ա-

ւետարանիս, նաև զպատահեալ տեսողք սորա, առնուլ ի մտի զրան վարդապետութեանն Քրիստոսի, որ ասէ. խնդրեցէք և տացի ձեզ, հայրեցէք և գտնիք: Խնդրեցէք ի յԱստուծոյ ի հասարակաց կենաց տուողէն, զի զԿեոտարոյ որդեակն զկոչեցեալն Քորոս՝ զմխիթարութիւն սրտին, որ այժմ տուեալ եղև պարզևք Աստուծային՝ առնուլ զհասակ երիտասարդական, և հասանել մինչև ի խորին ծերութիւն, զաւրութեամբ հզաւրին զաւրացեալ, և առաւել քան զառաւել մեծացեալ, ընուլ զտեղ նախնոյն իւրոյ զմեծին Քորոսի, ընդարձակել զաշխարհս Հայոց, առնուլ զվրէժս քրիստոնէից ի քաննասարսս, նկուն լիցին ի սրոյ դորա բնակեալքն ի յեզրպտուս Այնպէս փառաւոր լիցի յաստուածայնուստ յաշխարհի, իբր զարեգակն ծագեալ՝ նուազեցուցանել զլոյս ճրագաց:

Աղաւթս ձիգս մատուցանել առ Աստուած, մանաւանդ յիշմամբ՝ և սրտահառչող որով յիշել զաղբիւրն յորդառատ, զմայրն իմաստութեան զերախտաւորն Հայաստանհայցս զարքայն Հիմով որով սոքայքս յառաջ ածան: Զի այնչափ սիրեսց զքրիստոնեայս և զեկեղեցիս Հայաստանեաց մեալ հաստատուն, մինչ զի զանձն իւր եղ ի մահ՝ բազում անգամ: Կեցեալ սորա բարեպաշտութեամբ և ուղղութեամբ թագաւորութեանն: Կատարեալ զընթացս իւր փոխեցաւ ի Քրիստոս: Տացէ սմա Աստուած փոխանակ անցականիս զանանց թագաւորութիւնն: Ասելով սմա ծառայ բարի և հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն Տիառն քո: Լիցի սա թագակից և պսակակից սրբոյ թագաւորութեանն, վայելել և թագաւորել յերկնային քաղաքն ի վերին Երուսաղէմ:

Ղոզորմածն, զհեզանազն, բարեբարոյ, զաղքատասէրն՝ զբազմարշխն, զլցեալն ամենայն բարութեամբ, զճշմարիտ ժառանգն Հայաստան աշխարհիս Զապել Թազուհի զհանգուցեալն ի Քրիստոս յիշեցէք յաղաւթս մաքուրս, զի և սա բազում հոգեբարձութեամբ նախախնամեաց զաշխարհս, նաև զեկեղեցիս, և զվանաւարայս: Եւ ի վերայ ամենայն բարեացն զոր զործեաց յաւել և զայս զի ետ Հայաստան աշխարհիս ժառանգ, զի ոչ շրջեցաք անտերունջս, և կամ վարատեալս: Այլ զբնականութիւնս մեր ընկալաք: Տացէ նմա Աստուած սեփական հայրենիք զգրախան եղեմական՝ զուարճանալ և բարգաւաճել ընդ հեղինեանսն և ընդ այլ սրբոց թագունեացն:

Յիշել աղաչեմ ի միշտ զինեալ և անմահ կենդանւոյն զԵնումն զմեծ զուարականն Քրիստոսի, զքաջ սպառազէնն, զարին ողջամիտ, զգեղաշէն քաջակորով, զարեամբ նահատակեալն զՔորոս որդի սոցին, որ սրախողխող եղեալ ի մարտի: Վառուղի մեծ և անպատմելի ոճիրս զործեաց յանաւրինացն զաւրն ընդ որո՞ մախացեալ՝ սրախոց և կտրամահ արարին յլով նիզակակցաւք

համազնէիւք նորին, որո յիշատակն աւրհնութեամբ Անուն նորա ի դպրութիւն կենաց գրեցցի: Ձի անսուրբ և ամբարիշտ ձեռաւք նուիրեցաւ ընդունելի պատարագ Աստուծոյ Հաւք ի հոտ անուշից ի վերայ խաչին սեղանայ, յորս հաճեցցի տէր իբր յԱբելին, ի Նոյին և յԱբրահամուն, բոլորպատուդ զոհ, այս ամէն:

Որ թէպէտ հաճոյ դատաւ Աստուծոյ սակաւ աւուրբք, և կատարեալ քան զբազմամեայն զի ցանկալի էր Տեառն անձն նորա և վասն այնր ի միջոյ մեղաւորացս փոխեցաւ անաղաւտ լապտերաւք, զի մի մռայլ ինչ նստութեան զճաճանչ նշողից նորա մըղտացուցէ: Իւ այժմ թագապճնեայ ընդ համսեռսն ինքեան գեղապարէ զեռահիւսեակն նուագ երիցն և միոյ Տեառն մատուցանէ: Սփոփութիւն իւրայոցն անմխիթար սրտից խնդրելով զերեաց դարձ, կապելոց՝ արձակումն, կորուսելոց՝ գիւտ, վարատելոցն և աստանտելոցն՝ կաղզուրումն և խաղաղութիւն:

Ընթիրցողք այսմ մատեան Աստուածարան աւետարանիս զսոյնս բառնալ ՚ի ձեռս խնդրել ի Քրիստոսէ միջնորդութեամբ նորին, զի միշտ զաւգուտն մեր և զհաճոյսն իւր տնաւրիներեցէ թագաւորութեանս մեր՝ ներել և անոխակալ լինել յանցանաց մերոց: Եւ մի ըստ մեղս մեր տալ մեզ, այլ ի մեղս և յանաւրէնութիւնս վերակացու իւրագին ծառայիցս լիցի, և յիշողուցդ՝ և յիշելոցս տէր ողորմեսցի:

Այլ և զեղկելիս զԱւետիս զրից յիշել յաղաւթս մի մոռանայք: Ով աստուածագարդ սրբասնեալ քահանայք, որք յայսմ աստուածախաւս մատենիս խրախանայք, և յոսկիանկար ծաղկոց և պատկերացն. բարգաւաճիք, զհանգուցեալն ի Քրիստոս զՊարոն կոստանդին զտէր Լամբրունին, զմեծ հայր բարեպաշտ ու հոյս կեռանի, յիշեցէ յաղաւթս, զի տացէ նմա Աստուած հանգիստ յանսպառ կեանսն դասակցելով սրբոց իշխանացն որք վասն Քրիստոս նահատակեցան. զի ազգանուէր ընտիր գոլ նմա, և հարազատութեամբ զեր ի վերոյ, որդի միժին Հեկժոյ Աւաստասիոսի եղբար տեան ներսէսի և աստիճանաւ պատուեալ. զի են թագադիրք թագաւորութեանս Հայոց, զի շնորհեցէ նմա Աստուած թագ արքայ յական, բրբրին պսակ ի գլուխ նորա, և փոխանակ անցալանիս թագաւորեցնելոյ, ընկալցի ի Քրիստոսէ թագաւորութիւն մշտընջենաւոր:

Ի թուարբերութեանս Հայոց ՉԻԳ. յամսեանն Մայիսի հնգետասան աւրն, յԱստուած փոխեցաւ Ըոսվբն որդի սրանուհոյն Կեռանի, և եթող սուգ մեծ յոյժ գեղազարդեալ էր՝ տեսակով, ընդ որո և դուք. ցաւակից գոլով սրբերամ դասք յաղաւթս յիշատակել զստընդեայն դայն, զի ընդ անմեղ մանկունսն մեր Աս-

տուժոյ Հաւր նուերեցաւ դասակցեսցի և սփոփանս հաւրն և մաւրն արասցէ ի խոր տրտուութենէն աղատել:

Յաղաթս յիշել աղաչեմ, զՍմբատ մխիթարութեան որդեակ նորա որ ծնեալ եղև յետոյ մահուանն Ըստրինի, երկար ժամանակաւ վայելել ի տես նորա, խնդալ ի տուրս Աստուածային, զի ոչ եթող թերի զտեղի զորս առ իւրն տարա: Այլ և մաղթանս առ Աստուած մատուցուք զի զգեոարոյս քոր սորին Զապել պահեսցէ Աստուած անվրդով երկար ժամանակաւ մնալ նմա, զի յոյժ սիրեցեալ եղև յաչս հաւրն և մաւր:

Սրտի մտաւք աղաթս արարէք և միւս այլ քաւր սոցին Զապելի, որ է ամակ երրորդի կեալ յաստիս երկայն աւուրքք, հասանել 'ի չափ հասակի, բարիոք աշխարհավարել, սրբամիտ և ողջխոհ մարմնով տալ փառս ամենասուրբ Երրորդութեանն:

Ով կըքնարք, խնդրեցէք յաղաթս ձեր զստնդիս տղայքն արքայուհոյն. զԿոստանդին, զՆերսէս, զԱւրին, և զԸստրէն, մնալ անսասանելի յամենայն պատահմանցս:

ժա. Եզվերջին ստացաւդ սուրբ աւետարանիս այս, զՏէր Մարտիրոս Երուսաղեմա արքեպիսկոպոս յիշեցէք ի սուրբ աղաթս ձեր, որ գնեցի յիմ հալալ արգեամքքն զսուրբ աւետարանս և արծաթեցի զինքն և զբի ինձ յիշատակ և իմ ծնողացն ի սուրբ Յակոբ ողփ: Եւ ով որ հանէ զինքն ի սուրբ Յակոբայ կամ ծախէ կամ զբաւ զնէ նա առնու զՅուդայիս զխաչահանուացն զմասն և բաժին. կազմեցաւ սուրբ աւետարանս արծաթով ի թղ. հայոց ՊՂ. (=1441) ի փառս Աստուծոյս:

ժբ. Զզվերջին ստացող աւետարանիս ՀասանքէՔցի մղղեսի Յակոբ որ հանդիպեցաւ ի Ստէպօլ, որ արապ մի տարաւ զաւետարանս յԵրուսաղէմայ ու զնաց ծախեց ի Ստաւպօլ այս մղղեսի Յակոբն տեսաւ զաւետարան աղատեց ու բեր ի Հալապ քաղաք որ տանէր յԵրուսաղէմ. հեծելութիւն էր ու ճանապարհ չկէր երթալոյ առան թէ տանեմ հետ ինձ ի մեր աշխարհս. եկաւ ու ժողովեցան Հալապ ջահանայք և տանուտէ(ր)ն աղաչեցին զմահղեսի Աղուրն թէ զայս աւետարանս մի տանի ի հետ քեզ. ի մօտ մեզ թող. այս Երուսաղէմայ դուռն է: հանց համարէ թէ Երուսաղէմ է: Աստուած աւրճնէ մուղղեսի Աղուրն, որ զմեր խօսքն լսեց ու զմեր սրտի կամք արաւ: Թողի ձեզ ի մօտ ամանաթ կենա, ինչ որ երթամ իմ տեղն Աստուած յաջողէ որ գամ ու առնում տանիմ Երուսաղէմ իմ հոգուս համար և իմ ննջեցելոց համար. թէ ես գամ կամ իմ որդին զայ առնուք և տանիք բարով Երուսաղէմ ու զնիմ ի սուրբ Յակոբ:

ողֆութեան ես չեմ ի գար իմ նշանայ գայ նայ դուք տարէք:

- Հալալայ քահանայք և տանուտէրքն վկայեցին ի վերայ այս բանիս որ մղտեսի Աղուբն հասանքէֆցին յիշատակ հիթիբ զսուրբ աւետարանս ի սուրբ Յակոբն ողֆ. յիշատակ իւր և իւր ծնողաց Աստուած ողորմի իւր հաւրն էնպարաքին, և մարն Մարիամին, և որդուն էնպարաքին, և զայլ ամենայն ազգայինս զկենդանիսն և զանգուցեալն առ Քրիստոսն և Աստուած զձեզ յիշեցէ իւր միւս անգամ զալստեան ամէն: Ի թվականիս Հայոց ԶԿԶ (=1517) ապրիլ ամիս ԺԹ. զմեղաւոր և զանարժան Մանսուր գրիչս յիշեցէք ի Քրիստոսս:
- ժգ. «Զվերջին ստացաւ սուրբ ավետարան Երուսաղէմի էր երբ օ արապ ըստամպոլ ծախեց ծ ֆևորի Ամիրհասէն, օ հայ գնէց, էտէվ վաղջանեցաւ ամիր, ավլի մալի մոյիտէն ծախեցին ըստամպոլցի անուն Ուսուր էր, ավլի գնեց ծ ֆլորի թվին ԶԾԸ (=1509) վոր Երուսաղէմ տանեմ իշատակ զնեմ. Աստուած ճամբայ չէ էրէտ, էղէվ օ քիստոնի մղտեսի համիտցի տեսաւ սուրբ ավետարանըս ասաց թէ քանի տառի է կուպահես առ ինձի տուր ասաց ազաջեց ըսս խոսկէն չի էլայ, էրդամ ասաց Երուսաղէմ սուրբ ակոր դողում ասաց իշատակ. Քու ողորմութիւն հետընայ ասաց ըսս ալ նորայ համար առի էի վոր հոն տանէի, իմ ձերոքըս նասիպ չէ էլաւ. ավլի սուրբ Երուսաղէմի համար ան մարդուն խոսկէն չի էլայ տվի: Խ ֆլորին երէդ, ասաց Մ ֆլորին քու ողորմութիւն ընծայ. ասաց ան մղղիցի համիտցի: Վոր էրդամ սուրբ ակոր իշատ թողում. ասաց Քիստոնի Յուսէֆն ալ զայիլ եղաւ էրէդ. Թվին Հայոց ԶԿէ (=1518) Դնկտեմբեր ամսուն է ներս:

ժդ. Թդ, 381 բ. «Զվերջին ստացաւ սուրբ ոսկիապատ աւետարանիս զտէր Յովհանէս կաթողիկոսն Թուլիք ուրընցին ազաչեմ յիշիլ ի սուրբ յաղաւթս ձեր, որ ստացաւ զսայ յիշատակ իւր ի հալալ արդեանց իւրոց: Եւ հա զսայ յիշատակ անջինչ որ կենայ ի սուրբ Յակոբս սեփական: Արդ գնեցի զսուրբ աւետարանս ի թւին հայոց Զ Զ Բ (=1523) և եղի յիշատակ ինձ ի սուրբ Յակոբս:

ժե. Թդ. 381 բ. «Ի թվ. հայոց ՌՃԷԶ—1727 ամին կազմեցաւ և ոսկիապատ սուրբ կտակս աստուածային ջանիւք և արդեամբք Գրիգոր և Յովհաննէս զրուպ վարդապետացս և կազմողս սորա զՅովհաննէս ձեր վարդապետնս:

Նոյն յիշատակարանը ոտանաւորով:

մդ. թղ. 381 բ. 382 ա. «Ի թվ. հայոց ՌՃՀԶ (=1727) ամին կազմեցաւ և ոսկիապատ դարձարեցաւ սուրբ կտակարանս աստուածային ջանիւք և արդեամբ Գրիգորին»:

Ոսկիապատ զարդարեցաւ,
Աւետարանս և կազմեցաւ,
Արդեամբք ջանիւք սիւ ով մեծաւ,
Իմս ԳՐԻԳՐՈՐԻ տրուալ պետաւ.
Եւ ծայն նորորս բարեհամբաւ,
Այլ և ՀԵՆՆԷ ընդ յոգունս խրմբաւ,
Եւ յիշատակ յԱթոռս եղաւ.
Որ Տեսանս եղճօր զամ կոչեցաւ.
Տեսողիդ զսայ փրդօնկ անծկաւ.
Զմեզ յիշեցէջ տա էնն անբաւ.
Ի թիւըն համառը կատարեցաւ.
Ի փառս փրկչին որ է անզրաւ»

Այս վերջի յիշատ. գրեած է Գրիգոր Շղթայակերի ձեռքով:

Այս նշանաւոր յիշատակարանները տպագրուելով աւաջին անգամ, պարունակում են հարուստ պատմական տեղեկութիւններ նաև հէնց իր ձեռագրի մասին:

Վերջի նկարը, որ մեր համոզմամբ դարձեալ Թորոս Ռոսլինի գորչն է ներկայացնում է Վասակ Իշխանին (պատկեր Գ):

Առաջին ակնարկից իսկոյն երևում է ընդհանուր նմանութիւնը Վասակ իշխանի և Լևոնի ընտանիքի նկարների: Քրիստոս մի մատուռի մէջ նստել է գահի վրայ, ձախ ձեռքում բռնած ունի ծնկան վրայ յիցած փառակազմ Աւետարանը, աջով օրհնում է իւր առաջ խոնարհութեամբ ծնկաչոք աղբսողներին: Սոցա հովանաւորում է առ Որդին իւր բարեխօս Աստուածածինը, որը կանգնած աղբսողների կողքին, երեսը դէպի Յիսուս, աջ ձեռք նոյնպէս դէպի նա մեկնած, ձախով լայն բացել է իւր վերարկուն իրբև հովանի և բարեխօս է Վասակին և նրա երկու որդիներին: Վասակը և նրա որդիքը իրենց ծնկաչոք դիրքով ձեռները կարկառած, իրենց տարազով, դէմքների արտայայտութեամբ միանգամայն նման են Լևոնին և նրա որդիներին: Վասակի ուսերին իշխանական ծիրանի է. շապիկը միագոյն է. մեծ որդու զգեստը աւելի հարուստ է, ինչպէս գահատառնիգ Հեթում իշխանինն էր: Լմանութիւնը կատարեալ է Աստուածածնի և Քրիստոսի նկար-

ննրի. և ընդհանուր արտայայտութիւնների նախկին նկարի հետ համեմատած:

Այստեղ սակայն պարզ միջավայր է. Յիսուս և Աստուածածին երկնքից իջած գտնուում են եկեղեցու մէջ, Քրիստոս բազմաւ է հայրապետական գմբէթայարկ գահի վրայ և օրհնում է ծնկաշող, գլխաբաց իրեն դիմող Չերմեռանդ իշխանին և նրա սիրասուն զաւակներին: Ամբողջ տեսարանը առնուած է դունաւոր շրջանակի մէջ:

Նկարի տակի յիշատակարանը՝ որ գրուած է Յովհաննէս արքայեղբայր նշանաւոր եպիսկոպոսի ձեռքով, տալիս է Վասակի և նրա որդիների անունները:

«Պարոն Վասակ է արքայեղբայրն հայոց ստացող սուրբ աւետարանիս այս, ևւ աստուածապարգեւ զսակեք նորա Կոստանդին եւ Հեթում, զորս ի սլարս սիրելեացն իւր ընկալցի Քրիստոս Աստուած հայցմամբ սուրբ ծնողին իւրոյ: Եսան ուղղող սորա զՅովհաննէս և Կիսկոպոս և ըբայր սորա եւ զմերսն յիշեցէք ի Քրիստոս:

Ձեռագրի գլխաւոր յիշատակարանը կորած է, ժամանակը պիտի որոշենք երկու արքայեղբայրների թուականով:

Այս ձեռագիրը Երուսաղէմի հ. 2568 է. ընտիր մագաղաթից է, 222 թերթ, 25 X 18 մեծ բոլորագրով, ոսկեգիր գլխագրերով սքանչելի լուսանցազարդերով, մեծ մասը սկսուածքի խորանների նման բարձրաքանդակ. արժաթի կազմը նոր է:

Քրիստոսի տնօրինական նկարները բնագրի մէջ են, որոնց մասին ձեռագրի նկարագրութեան մէջ այսպիսի ծանօթութիւն ենք գրել:

«Ուշագրութեան արժանի են ձեռագրի նկարները: Արուեստը Կիլիկիան շրջանինն է, բաւական նման Լևոնի և Կեռանի Աւետարանի նկարներին, բայց սրա նկարիչը գերազանց է. մեր տեսած Կիլիկիան բազմաթիւ նկարներ սորան հաւասարեցնել չենք կարող: Ուշագրութեան արժանի են ներկայացրած անձանց դիմագծութիւնները. նկարիչը իրաւ է դժուարանում է ցանկացած անձանց ճշգրիտ դիմագծութիւնները տալու, բայց նրան գերազանցօրէն յաջողուել է պատկերացնել մարդկանց սրտի յուզմունքները, իւրաքանչիւրի դէմքին տալով տխրութեան, թախիծի, յափշտակութեան, վարանմունքի և այլն արտայայտութիւն: Մարմնի մերկ մասերը այնքան էլ յաջող չեն նկարուած, թէև այդ դէպքում էլ յայտնի է որոշ հմտութիւն. դրա փոխարէն զգեստները, մարմնի ամբողջ շարժուածքը զբաւիչ են և ապացոյց են որ զօրծ

ունենք հանճարեղ վրձին ունեցող անձնաւորութեան հետ: Լուսանցներում նկարուած են չափազանց փոքրադիր տեսարաններ աւետարանի բովանդակութիւնից, իսկական «մանրանկարներ», ոսկեայ ծաղկադարձ շրջակներում, կամ առանց շրջանակի, իւրաքանչիւրը ակնապարար և դրաւիչ»:

Մեր ասածները հաստատելու համար իբրև նմուշ մենք տալիս ենք Քրիստոսի ծննդեան սքանչելի տեսարանը, հետն էլ դեղադիր բնագրից մի երես կողքի լուսանցադարձով: Փոքրիկ տեսարանի մէջ մեծ հմտութեամբ պատկերացած են Բիթղիէէմի այրը, «փառք ի բարձունս» երգող հրեշտակները, մոգբրի և նովիւնբրի երկրպագութիւնը, և Քրիստոս մանկան լուացման տեսարանը ի ներկայութեան Յովսէփի: Նկարի բուն կենտրոնը բռնում են Աստուածամայրը և Քրիստոս մանուկը, որի վրայ երկնքից շող և աստղ են իջնում: (Տես պատկեր Ե)

Միայն հարկ եմ համարում նկատելու, որ Վասակ իշխանի պատկերի նկարիչը, որ մեր համոզմամբ թորոս Ռուխինն է, Ձուռագրի միջի տնօրինական նկարների և լուսանցադարձերի նկարիչը չէ: Վերջինս մեկ համար դեռ ևս անծանօթ հայ մանրանկարչական արուեստի ամենափայլուն ներկայացուցիչն է:

Մեր այս ընտիր աւետարանը գրել դուողը կամ ստացողը Լամբերոնեան Վասակ իշխանն է «արքայ հղբայր» տիտղոսով: Լևոն «մեծազոր» Ռուբինեան ամենանշանաւոր թագաւորը իւր իշխանութեան ժառանգ թողեց իւր դստեր Ջապէլին, որի վրայ ամուսնացաւ և թագ ստացաւ Լամբերոնի իշխան Կոստանդին որդի Հեթումը, Լևոն Գ-ի հայրը: Հեթումի թագաւորանալուց յետոյ Կոստանդինը ստանում է «թագաւորահայր» և «Աւագ պարոն» տիտղոսները, իսկ նորա միւս չորս որդիքը առանձին հպարտութեամբ սկսում են գործ ածել «արքայեղբայր» կոչումը: Կոստանդինը ունէր հինգ որդի, Հեթում թագաւոր, Յովհաննէս եպիսկոպոս Գրուներոյ որի աշխարհի անունն էր Պաղղին, Սիր Լիկոս, Վասակ տէր Ճանճոյ բերդի, որ սակայն թագաւորի հետ համամայր չէր. և Կոստանդին, տէր Նղրի բերդի: Հեթում թագաւորը Լևոնին զերութիւնից ազատելու համար իւր Վասակ եղբորն է ուրիշ իշխանների հետ ժամանակաւոր պատանդ ուղարկում նգիպտոս: Վասակն յայտնի էր իւր քաջութեամբ և բարեպաշտութեամբ. սա հեռանելով իւր հայրական տան աւանդութիւններին գրել է տալիս ձեռագրեր, որոնցից պահուած են աւետարաններ և մի Ատենի Սաղմոս. դնում է եկեղեցական սպասներ և անօթներ և նուիրում է եկեղեցիներին. սա ի լրումն ամենայնի շինում է մի եղեղեցի: Վասակի կենաց թուականը յայտնի չէ, բայց իբրև Հեթումի փոքր

եղբայր կարող է նրա անդրանկի Լևոն Գ-ի հասակակից կամ մի փոքր աւելի լինել: Մեր Աւետարանի մէջ կայ նաև նրա եղբոր Յովհաննիսի անունը, եպիսկոպոսական աստիճանում, որովհետև սա հաւանօրէն ձեռնադրուել է 1259 թ., (Տես Միսուան էլ 144—47, Տաշեանի ցուցակ 634 և մեր հրատարակած Ներքողեան ի Սուրբն Մեսրոպ էջ 6), ուրի՛նք պէտք է եղբակացնել, որ մեր ձեռագիրը գրուել է 1260—70 թուականներում, համարեա թէ նոյն թուականներին երբ Լևոնի աւետարանն է գրուել:

Այդպիսով Լևոնի 3 և Վասակ իշխանի նկարները բոլորը վերագրում ենք Քորոս Ռոսլին նկարչին, որ այդ աշխատանքը կատարել է 1250—1257 թուերի, 22 տարուայ ընթացքում: Նկարներից երկուսի թւականի մասին խօսք լինել չէ կարող. այդ վկայում են ձեռագրերի յիշատակարանները, թէական են միւս երկուսը, յատկապէս Վասակինը, որի միջի միւս բազմաթիւ նկարները, բացի Վասակի նկարից, տրամադիր ենք ուրիշ նկարչի գործ համարելու: Այդ դէպքում էլ իրանք նկարներն են խօսուուն վկայ. Լևոնի և Վասակի իրենց ընտանիքով նկարները չափազանց շատ նմանութիւններ ունին, երկու նկարիչներ հաղիւ թէ այդ աստիճան իրար նմանէին:

Քէ և ինչպէս վերը յիշեցինք, նորագոյն ուսումնասիրութիւնների մէջ Ռոսլինի անունը ուղղակի անձանօթ է, սակայն մեր կազմած ձեռագրոց ցուցակը մեզ միջոց է տալիս հռչակել նրան իբրև հայ նկարիչներից և գրիչներից ամենաբեղմնաւորներից մէկը, և որովհետև գլխաւորապէս Կոստանդին կաթողիկոսի, Կեռան թագուհու, Վասակ իշխանի և այդ շրջանի անձանց համար է աշխատել, հիմք կայ եղբակացնելու՝ որ նա ճանաչուած արքունի նկարիչ էր: Կամենալով աւելի մօտիկուց ծանօթանալ նրա անձնաւորութեան հետ, ամենից առաջ ուշադրութեան ենք առնում նրա կրկնակի անունը, որը սակայն Կիլիկեան շրջանում բաւական սովորական է. միայն անսովոր է նրա Ռոսլին անուան զուտ Եւրոպական անունը: Ռոսլին հայի անուն չէ: